

Ծրագիր	«ԵՄ-ն հանուն Հայաստանի համայնքներում Էներգաարդյունավետության և վերականգնվող Էներգիայի»
PN	2018.2062.0-015
Հանձնարարություն	Ինստիտուցիոնալ, իրավական և տեխնիկական կարողությունների շրջանակների ուսումնասիրություն՝ ուղղված կոշտ կենսազանգվածային վառելիքով աշխատող Էներգաարդյունավետ վառարանների և լոկալ ջեռուցման կաթսաների տեղական արտադրողների խթանմանը
Երկիր	Հայաստան

1. Հակիրճ տեղեկություններ ծրագրի մասին

«Բնական պաշարների կառավարում և Էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» («ԷԿՈՍԵՐՎ») բնապահպանական ծրագիրը Գերմանիայի ավելի լայն աջակցության մի մասն է «Բնապահպանական քաղաքականություն, բնական ռեսուրսների պահպանություն և կայուն օգտագործում Հարավային Կովկասում» գերակա ոլորտում: Այն պատվիրակված է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն (BMZ) կողմից և իրականացվում է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից:

«ԷԿՈՍԵՐՎ» ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանում արոտավայրերի և խոտհարքների կայուն և կենսաբազմազանության տեսանկյունից բարենպաստ օգտագործման պայմանները՝ հաշվի առնելով գյուղական բնակչության Էներգետիկ անվտանգությունը: «ԷԿՈՍԵՐՎ» ծրագիրն իրականացվում է GIZ-ի կողմից՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Շրջակա միջավայրի և Էկոնոմիկայի նախարարությունների հետ համատեղ:

ԵՄ-ի կողմից համաֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն Հայաստանի համայնքներում Էներգաարդյունավետության և վերականգնվող Էներգիայի» (EU4EE) ծրագիրը «ԷԿՈՍԵՐՎ»-ի մաս է: Ծրագրի նպատակն է ապահովել համայնքներին և տնային տնտեսություններին Էներգաարդյունավետության և կայուն Էներգիայի հնարավորությունների ավելի լավ հասանելիությամբ՝ նպաստելով գյուղական բնակչության Էներգետիկ անվտանգության բարելավմանը և բնական պաշարների պահպանությանը:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ Լոռու, Տավուշի, Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի առավելապես Էներգիայի տեսանկյունից խնդրային համայնքներում: Ծրագրի անմիջական շահառուներն են տեղական համայնքներն ու բնակչությունը: Առաջնայնություն կտրվի ցածր եկամուտ ունեցող խոցելի տնային տնտեսություններին (SS) և հանրային/համայնքային կառույցներին, ներառյալ մանկապարտեզները, առողջության, սպորտի և մշակույթի կենտրոնները, բուսաբանական այգիները, տեղական թանգարանները և այլն:

2. Համատեքստ

«ԵՄ-ն հանուն Հայաստանի համայնքներում Էներգաարդյունավետության և վերականգնվող Էներգիայի» ծրագրի նպատակն է ապահովել համայնքներին և տնային տնտեսություններին Էներգաարդյունավետության և կայուն Էներգիայի հնարավորությունների ավելի լավ հասանելիությամբ՝ նպաստելով գյուղական բնակչության Էներգետիկ անվտանգության բարելավմանը և բնական պաշարների պահպանությանը:

Վերջին տարիների ընթացքում GIZ բնապահպանական ծրագիրն աշխատել է վառելիքայտի կամ գոմաղբի՝ որպես ջեռուցման էներգիայի աղբյուրի ավելի արդյունավետ օգտագործման կամ փոխարինման շուկայական մոտեցումների խթանման ուղղությամբ, ինչն անդրադառնում է նաև կանանց համար որոշակի օգուտներին (օրինակ՝ ներտնային օդի որակ, սենյակային ջերմաստիճան, վառելիքայտի օրինական ձեռքբերում, տնային տնտեսությունների ծախսերի կրճատում): Գյուղական բնակավայրերի տնային տնտեսություններում էներգաարդյունավետության (ԷԱ) բարձրացումը կարող է զգալիորեն նվազեցնել ջեռուցման համար վառելիքի (վառելիքայտ, գոմաղբ և այլն) օգտագործումը՝ նվազեցնելով անտառների կրճատումն ու բնակչության շրջանում էներգիայի պակասը: Վերականգնվող կենսազանգվածից ստացվող այլընտրանքային կոշտ կենսավառելիքը նույնպես կարող է փոխարինել վառելիքայտի/գոմաղբին՝ որպես ջեռուցման համար օգտագործվող վառելիք: GIZ բնապահպանական ծրագրի շրջանակներում վերջին տարիների ընթացքում մի շարք ուսումնասիրություններ են իրականացվել Հայաստանում գյուղական բնակավայրերի էներգիայի պահանջարկի, առաջարկի և արդյունավետության վերաբերյալ՝ կենտրոնանալով գյուղական բնակավայրերում վառելիքայտի և գոմաղբի օգտագործման հետ կապված ասպեկտների վրա:

2020-2021 թթ.-ին իրականացվել է Հայաստանի տարբեր վայրերում տեղական վարպետների կողմից վերջին տարիների ընթացքում պատրաստվող և բնակչության կողմից վստահություն վայելող մի շարք վառարանների ԷԱ և այլ տեխնիկական բնութագրերի փորձագիտական գնահատում՝ հնարավորինս հաշվի առնելով կիրառական ստանդարտները: Վառարանների գնահատման վերաբերյալ հոդվածը հասանելի է [հետևյալ հղումով](#) (տես էջ 87-94): ՀՀ Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերի ընտրված համայնքային խմբերում իրականացվել է պիլոտային միջամտություն՝ խթանելով գնահատված վառարաններից ընտրված բարձր ԷԱ ունեցող երեք վառարանների տեղական արտադրությունն ու գործող արտադրամասերում արտադրվող կենսավառելիքային բրիկետների (ծղոտի հումքից) օգտագործումը: Ընդհանուր 72 շահառու ձեռք է բերել ԷԱ վառարաններ՝ վճարելով դրանց գնի մի մասը, մանրամասները համառոտ ներկայացված են [տեղեկատվական թերթիկում](#):

2023-2024 թթ. աշխատանքներ են տարվել կոշտ կենսազանգվածային վառելիքով աշխատող տեղական արտադրության մեկ կետի վառարանների և լոկալ ջեռուցման կաթսաների էներգաարդյունավետության և այլ տեխնիկական բնութագրերի գնահատման և բարելավման ուղղությամբ՝ ըստ գործող ազգային և ԵՄ ստանդարտների: Կոշտ կենսազանգվածային վառելիքով աշխատող մեկ կետի վառարաններին և լոկալ ջեռուցման կաթսաներին վերաբերող Հայաստանի ազգային ստանդարտները միջպետական ԳՕՍՍ ստանդարտներ են, որոնք կամավոր բնույթ են կրում: Հայաստանում արտադրողների համար ԵՄ ստանդարտները պարտադիր չեն:

Գնահատվել և բարելավվել է մեկ կետի վառարանների երկու մոդել, 2024 թ-ի ընթացքում մոտ 450 վառարան արտադրվել և տրամադրվել է ծրագրի թիրախային մարզերի բնակչությանը: Գնահատվել է Հայաստանի տարբեր մարզերի տնային տնտեսություններում օգտագործվող լոկալ ջեռուցման կաթսաների հինգ մոդել: Դրանցից յավագույն ելակետային ցուցանիշներով երկու ընտրված մոդելները բարելավվել են էներգաարդյունավետության և այլ ցուցանիշների առումով՝ դրանք հնարավորինս համապատասխանեցնելով գործող ստանդարտների պահանջներին: Վառարանների և կաթսաների բարելավված 4 մոդելների համար ստեղծվել են արտադրության մանրամասն սխեմաներ և օգտագործողի ուղեցույցներ, մանրամասն գծագրերով կյուբերը տրամադրվել են արտադրողներին: Կաթսաների ընտրված մոդելներն արտադրվում են Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում, վերջին տարիների ընթացքում տարեկան պահանջարկը կազմել է մոտ 70-80 կաթսա: Բոլոր փորձագիտական աշխատանքների կյուբերը առկա են՝ վերջնական հաշվետվության հետ միասին:

Այս առաջադրանքի շրջանակներում ակնկալվում է, որ փորձագետը կուսումնասիրի Հայաստանի ինստիտուցիոնալ, իրավական/կարգավորող և տեխնիկական շրջանակները՝ կապված կոշտ կենսազանգվածային վառելիքով աշխատող տնային տնտեսություններում

օգտագործվող մեկ կետի վառարանների և լոկալ ջեռուցման կաթսաների հետ: Մասնավորապես, կարիքների գնահատումը պետք է ընդգրկի ինստիտուցիոնալ, իրավական, տեխնիկական և այլ կարողությունները, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ջեռուցման սարքեր արտադրողները կարողանան ձեռք բերել համապատասխան պետական փաստաթուղթ (գրանցում/լիցենզիա/վկայագիր՝ ըստ հնարավորության և կիրառելիության), պետք է բացահայտվեն բացերը և մշակվեն բարելավման առաջարկներ: Պետք է տրամադրվի աջակցություն մինչև 4 տեղական արտադրողի՝ իրենց արտադրած արտադրանքի համար պետական փաստաթղթեր ստանալու համար (գրանցման/լիցենզիայի/վկայականի փաստաթուղթ՝ ըստ հնարավորության և կիրառելիության):

3. Առաջադրանքներ և պայմաններ

Առաջադրանքի կատարման ակնկալվող ժամկետ՝ **2024թ. նոյեմբերի 1 – 2025թ. հունվարի 31**: Հանձնարարության համար նախատեսվում է մինչև **18** փորձագիտական օր:

Առաջադրանքի գործողությունների ընդհանուր շրջանակ.

- Ուսումնասիրել Հայաստանի ինստիտուցիոնալ, իրավական և տեխնիկական շրջանակները, որոնք առնչվում են տնային տնտեսություններում օգտագործվող կոշտ կենսազանգվածային վառելիքով (վառելափայտ, կենսազանգվածային բրիկետ) աշխատող մեկ կետի վառարաններին և լոկալ ջեռուցման կաթսաներին՝ մասնավորապես տեղական արտադրության վերոնշյալ ջեռուցման սարքերի գրանցմանը/լիցենզիայի/վկայականի տրամադրմանը (ըստ հնարավորության և կիրառելիության), իրականացնել կարիքների գնահատում, վերհանել առկա բացերը և կարողությունների գարգացման կարիքները, ներկայացնել առաջարկներ բացերի և կարիքների լրացման ուղղությամբ, կատարել հղումներ եվրոպական երկրների փորձի վրա, որոնք կարելի է դիտարկել որպես լավագույն կիրառելի օրինակներ:
- Ձևակերպել հետագա քայլերը և առաջարկություններ տեղական արտադրողների համար, ու աջակցություն ցուցաբերել մինչև 4 տեղական արտադրողի՝ արտադրվող էՎ ջեռուցման սարքերի համար պետական գրանցում կամ լիցենզիա/վկայական ստանալու ուղղությամբ (ըստ հնարավորության և կիրառելիության):
- Իրականացնել քննարկումներ և հանդիպումներ համապատասխան պետական կառույցների՝ այդ թվում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի, հետազոտական հաստատությունների և ոլորտում ներգրավված այլ դերակատարների հետ՝ ներառյալ միջազգային ծրագրերը, և մասնակցել ու փորձագիտական ներդրում կատարել ծրագրին առնչվող թեմաներով հանդիպումներին/աշխատաժողովներին/ քննարկումներին:

Ճառայություն մատուցողը պատասխանատու է հետևյալ աշխատանքների և արդյունքների ապահովման համար:

Առաջադրանքներ	Գործողություններ և արդյունքներ	Օրերի քանակ (մինչև)	Ներկայաց- նելու վերջնաժամկե տ
1. Ուսումնասիրել Հայաստանի ինստիտուցիոնալ, կարգավորող և տեխնիկական	Գործողություններ՝ 1. Հավաքագրել և ուսումնասիրել առկա զեկույցները/ուսումնասիրությունները/հաշվե տվությունները՝ կապված Հայաստանի ինստիտուցիոնալ, իրավական/կարգավորող	5	Նոյեմբերի 25, 2024թ.

<p>շրջանակները, որոնք առնչվում են տնային տնտեսություններում օգտագործվող կոշտ կենսազանգվածային վառելիքով (վառելափայտ, կենսազանգվածի բրիկետ) աշխատող մեկ կետի վառարաններին և լոկալ ջեռուցման կաթսաներին՝ մասնավորապես տեղական արտադրության վերոնշյալ ջեռուցման սարքերի գրանցմանը/լիցենզիայի/վ կայականի տրամադրմանը (ըստ հնարավորության և կիրառելիության), վեր հանել սեկտորում առկա բացերը և կարողությունների զարգացման կարիքները, ներկայացնել առաջարկների նախագիծ՝ բացերի և կարիքների լրացման ուղղությամբ, կատարել հղումներ եվրոպական երկրների փորձի վրա, որոնք կարելի է դիտարկել որպես լավագույն կիրառելի օրինակներ:</p>	<p>և տեխնիկական շրջանակների հետ, որոնք առնչվում են կոշտ կենսազանգվածային (վառելափայտ, կենսազանգվածի բրիկետ) վառելիքով աշխատող մեկ կետի վառարաններին և լոկալ ջեռուցման կաթսաներին:</p> <p>2. Ելնելով վերը նշված գործողություն 1-ի արդյունքներից՝ ուսումնասիրել Հայաստանի ինստիտուցիոնալ, իրավական/կարգավորող և տեխնիկական շրջանակները, որոնք առնչվում են կոշտ կենսազանգվածային (վառելափայտ, կենսազանգվածի բրիկետ) վառելիքով աշխատող մեկ կետի վառարաններին և լոկալ ջեռուցման կաթսաներին՝ ներառյալ զարգացումները և ինստիտուցիոնալ կառույցների ներկա վիճակը, համապատասխան կառույցների կառուցվածքը, իրավական/կարգավորող դրույթները և տեխնիկական հնարավորությունները:</p> <p>3. Իրականացնելով վերը նշված շրջանակների կարիքների գնահատում համապատասխան ջեռուցման սարքերը պետության կողմից գրանցելու/լիցենզավորելու/հավաստագրելու համար, վերհանել հիմնական առկա բացերը և կարողությունների զարգացման կարիքները, որոնք անհրաժեշտ են նշված սարքերի հավաստագրման համար, ներկայացնել առաջարկների նախագիծ (ճանապարհային քարտեզ) դրանք լրացնելու ուղղությամբ՝ հղում կատարելով ԵՄ երկրներին/ԵՄ պահանջներին, որոնք կարող են դիտարկվել որպես լավագույն կիրառելի օրինակներ:</p> <p>4. Ամփոփել աշխատանքը՝ ներկայացնելով տեղական արտադրության նշված ջեռուցման սարքերը պետության կողմից գրանցելու/լիցենզավորելու/հավաստագրելու (ըստ հնարավորության և կիրառելիության) շրջանակը: Այն պետք է ներառի մանրատ ունեցող դերակատարներին՝ այդ թվում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմինը, քայլ առ քայլ ներկայացված ընթացակարգերը և ժամկետները, պահանջվող փաստաթղթերը, ընթացակարգերն անցնելու իրագործելիությունը և ցանկացած այլ պահանջ՝ տեղական արտադրության նշված ջեռուցման սարքերը պետության կողմից գրանցելու/լիցենզավորելու/ հավաստագրելու (ըստ հնարավորության և կիրառելիության) համար:</p> <p>Արդյունքներ՝ Կարճ միջանկյալ զեկույց հայերեն լեզվով (առավելագույնը՝ 10 էջ գումարած հավելվածները)՝ ներառյալ թեմայի</p>	
---	--	--

	<p>վերաբերյալ առկա ուսումնասիրությունների/հաշվետվությունների ցանկը, իրականացված ուսումնասիրության և կարիքների գնահատման արդյունքները՝ ներառյալ առնչվող ինստիտուցիոնալ կառուցվածքը, իրավական փաստաթղթերի ցուցակները, տեղական արտադրողների համար կիրառելի համապատասխան ընթացակարգերը, համապատասխան հաստատությունների տեխնիկական կարողությունները, վերհանված բացերը և կարողությունների զարգացման կարիքները, որոնք անհրաժեշտ են նշված սարքերի հավաստագրման համար, և այդ բացերը լրացնելու առաջարկությունների նախագիծ՝ ներառյալ հղումները եվրոպական երկրների/ԵՄ պահանջներին, որոնք կարող են դիտարկվել որպես լավագույն կիրառելի օրինակներ:</p>		
<p>2. Ձևակերպել տեղական արտադրողների համար հետագա քայլերը և առաջարկություններ, ու աջակցություն ցուցաբերել մինչև 5 տեղական արտադրողի՝ նրանց արտադրած ջեռուցման սարքերը պետության կողմից գրանցելու կամ լիցենզիաներ/վկայականներ տրամադրելու ուղղությամբ (ըստ հնարավորության և կիրառելիության):</p>	<p>Գործողություններ՝</p> <p>1. Մշակել տեղական արտադրողների համար հեշտ հասկանալի ամփոփ ուղեցույց՝ հստակ քայլերով և բոլոր պահանջվող ձևանմուշներով/փաստաթղթերով, որոնք անհրաժեշտ են տեղական արտադրության ջեռուցման սարքերը պետության կողմից գրանցելու/լիցենզավորելու/հավաստագրելու (ըստ հնարավորության և կիրառելիության) համար:</p> <p>2. Աջակցել մինչև 4 տեղական արտադրողի (որոնք արտադրում են ջեռուցման սարքեր, որոնք գնահատվել են GIZ-ի աջակցությամբ տարբեր տեխնիկական ցուցանիշների առումով) ուղղորդելով նրանց անհրաժեշտ քայլերում և ընթացակարգերում կողմնորոշվելու համար, աջակցել արտադրողներին համապատասխան պետական մարմիններին անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթներ պատրաստելու և ներկայացնելու հարցում, որպեսզի արտադրվող ջեռուցման սարքերը գրանցվեն/լիցենզավորվեն/հավաստագրվեն պետության կողմից (ըստ հնարավորության և կիրառելիության): Սա ներառում է փաթեթների վերանայում և ճշգրտում պետական մարմինների կողմից հնարավոր արձագանքների և հետադարձ կապի հիման վրա: Մինչև 4 արտադրողի կոնստակտները կտրամադրվեն GIZ-ի կողմից: Այս արտադրողները գործում են Գեդարքունիքի, Վայոց Ձորի, Լոռու մարզերում և Երևանի մերձակա մարզերում:</p> <p>Արդյունքներ՝</p> <p>Միջանկյալ հաշվետվություն հայերեն լեզվով (առավելագույնը՝ 10 էջ գումարած հավելվածները)՝ ներառյալ ամփոփ ուղեցույց հստակ քայլերով՝ տեղական արտադրողների</p>	<p>5</p>	<p>դեկտեմբերի 2, 2024թ.</p>

	<p>համար և բոլոր պահանջվող ձևանմուշներով/փաստաթղթերով, որոնք անհրաժեշտ են տեղական արտադրության ջեռուցման սարքերը պետության կողմից գրանցելու/լիցենզավորված/հավաստագրելու համար (ըստ հնարավորության և կիրառելիության) և համապատասխան պետական մարմին/մարմիններին ներկայացնելու համար պատրաստ փաստաթղթերի մինչև 5 մշակված փաթեթ:</p>		
<p>3. Ամփոփել կարիքների գնահատման և կոշտ կենսազանգվածային վառելիքով (վառելափայտ, կենսազանգվածի բրիկետ) աշխատող մեկ կետի վառարանների և լոկալ ջեռուցման կաթսաների հավաստագրման առաջարկությունները (ճանապարհային քարտեզը) ներառյալ հղումները եվրոպական երկրների փորձի վրա</p>	<p>Գործողություններ`</p> <p>1. Հիմնվելով առաջին երկու առաջարկանքների արդյունքների վրա, ինչպես նաև համապատասխան պետական մարմինների և մանդատ ունեցող այլ կառույցների հետ լրացուցիչ քննարկումների ու GIZ-ից ստացած առաջարկների հիման վրա, ավարտին հասցնել կարիքների գնահատման աշխատանքները և նշված ջեռուցման սարքերի հավաստագրման համար առկա բացերի և կարողությունների զարգացմանն ուղղված առաջարկները (ճանապարհային քարտեզ):</p> <p>Արդյունքներ`</p> <p>Կարճ միջանկյալ զեկույց հայերեն լեզվով (առավելագույնը` 10 էջ գումարած հավելվածները)` ներառյալ իրականացված ուսումնասիրության և կարիքների գնահատման արդյունքները` ներառյալ առնչվող ինստիտուցիոնալ կառուցվածքը, իրավական փաստաթղթերի ցուցակները, տեղական արտադրողների համար կիրառելի համապատասխան ընթացակարգերը, համապատասխան հաստատությունների տեխնիկական կարողությունները, վերհանված բացերը և կարողությունների զարգացման կարիքները, որոնք անհրաժեշտ են նշված սարքերի հավաստագրման համար, և այդ բացերը լրացնելու առաջարկությունները` ներառյալ հղումները եվրոպական երկրների/ԵՄ պահանջներին, որոնք կարող են դիտարկվել որպես լավագույն կիրառելի օրինակներ:</p>	2	հունվարի 20, 2025թ.
<p>4. Աջակցել տեղական արտադրողներին` ջեռուցման սարքերի պետական փաստաթղթեր ձեռք բերելու հարցում (գրանցում/լիցենզիա/վկայական` ըստ հնարավորության և կիրառելիության):</p>	<p>Գործողություններ`</p> <p>1. Հետամուտ լինել գործընթացներին` պահանջվող փաստաթղթերի մինչև 5 մշակված փաթեթ ներկայացնելուց հետո:</p> <p>2. Աջակցել համապատասխան տեղական արտադրողներին` վերանայելու/լրացնելու ներկայացված փաթեթները` հիմնվելով համապատասխան պետական մարմինների հետադարձ կապի և պահանջների վրա:</p> <p>Արդյունքներ`</p> <p>Պետական մարմինների հետադարձ կապի հիման վրա թարմացված և լրամշակված</p>	1	պայմանագրով սահմանված ժամանակահատվածում

	<p>փաստաթղթերի մինչև 5 ներկայացված փաթեթ:</p>		
<p>5. Իրականացնել քննարկումներ և հանդիպումներ համապատասխան պետական կառույցների, հետազոտական հաստատությունների և ոլորտում ներգրավված այլ դերակատարների հետ՝ ներառյալ միջազգային ծրագրերը, և մասնակցել ծրագրին առնչվող թեմաներով հանդիպումներին/աշխատաժողովներին/քննարկումներին:</p>	<p>Գործողություններ՝</p> <p>1. Հանդիպել և խորհրդակցել համապատասխան պետական կառույցների՝ այդ թվում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Ստանդարտացման և չափազիտության ազգային մարմնի, ինստիտուտների, միջազգային ծրագրերի և ոլորտում մանդատներ և դերակատարում ունեցող այլ դերակատարների հետ՝ կարիքների գնահատման, բացերի վերհանման, տեղեկատվության և պարզաբանումների համար՝ հանձնարարականի առաջադրանքները կատարելու նպատակով:</p> <p>2. Մասնակցել և կատարել փորձագիտական ներդրում (պրեզենտացիա, հարցուպատասխան և այլն) ծրագրի կողմից կազմակերպված համապատասխան թեմաների վերաբերյալ առնչվող հանդիպումների/ աշխատաժողովների/քննարկումների ընթացքում:</p> <p>Արդյունքներ՝</p> <p>Մասնակցություն և փորձագիտական ներդրում մինչև 4 միջոցառումների ընթացքում</p>	<p>3</p>	<p>պայմանագրով սահմանված ժամանակահատվածում</p>
<p>6. Վերջնական հաշվետվություն</p>	<p>Գործողություններ՝</p> <p>1. Ամփոփել պայմանագրով սահմանված առաջադրանքների արդյունքները վերջնական հաշվետվության մեջ:</p> <p>Արդյունքներ՝</p> <p>1. Վերջնական հաշվետվություն հայերեն լեզվով՝ ներառյալ կատարված առաջադրանքների հիմնական արդյունքները հիմնական բացահայտումներով, եզրակացություններով և առաջարկություններով սեկտորում բացերը և կարիքները լրացնելու վերաբերյալ (առավելագույնը՝ 10 էջ գումարած հավելվածները, ներառյալ մշակված ուղեցույցները, ձևանմուշները և այլն):</p> <p>2. Ամփոփ վերջնական հաշվետվություն՝ առաջադրանքի կատարման հիմնական բացահայտումներով և առաջարկություններով (առավելագույնը՝ 10 էջ):</p>	<p>2</p>	<p>հունվարի 24, 2025թ.</p>

4. Համակարգում և հաշվետվություն

Խորհրդատուն պետք է զեկուցի GIZ-ին: Բոլոր գործողությունները և տեխնիկական հարցերը պետք է սերտորեն համակարգվեն և նախապես համաձայնեցվեն GIZ թիմի հետ:

GIZ-ը խորհրդատուին կտրամադրի համապատասխան ոլորտներում ամկա բոլոր տեղեկությունները և նյութերը, անհրաժեշտ հիմնական տեղեկատվությունը և այլ տեխնիկական տեղեկություններ՝ ըստ պահանջի:

Խորհրդատուն պատասխանատու է հանձնարարությունների հետ կապված հանդիպումների պլանավորման և համաձայնեցված վերջնարդյունքները ժամանակին տրամադրելու համար:

Բոլոր հաշվետվությունները և տեխնիկական վերջնարդյունքները պետք է պատրաստվեն ծրագրի հաշվետվության պաշտոնական ձևաչափով և ներկայացվեն GIZ-ին էլեկտրոնային տարբերակով հայերեն լեզվով:

5. Որակավորման պահանջներ

- Իրավագիտության, էներգետիկայի, բնապահպանության կամ առնչվող ոլորտում բարձրագույն կրթություն, թեկնածուական աստիճանը կոդիվի որպես առավելություն:
- Առնվազն 5 տարվա աշխատանքային/հետազոտության փորձ էներգետիկ/ջեռուցման սարքավորումների ազգային իրավական/կարգավորող շրջանակների ոլորտում: Կոշտ կենսազանգվածային վառելիքով աշխատող մեկ կետի վառարանների և լոկալ ջեռուցման կաթսաների ոլորտի իմացությունը և փորձառությունը կոդիվեն որպես առավելություն:
- Առնվազն 5 տարվա մասնագիտական փորձ Հայաստանում համապատասխան ոլորտում և Հայաստանի գյուղական վայրերում տնային տնտեսությունների ջեռուցման հետ կապված իրավիճակի իմացություն՝ ներկայացվող փաստաթղթերում համապատասխան նշումներով: ԵՄ երկրներում համապատասխան ոլորտի իմացությունն ու փորձը կոդիվեն որպես առավելություն:
- Գերազանց վերլուծական, հետազոտական, խորհրդատվական և հաշվետվություններ մշակելու հմտություններ,
- Գերազանց միջանձնային և հաղորդակցման հմտություններ,
- Հայերենի վարժ տիրապետում (հասկանալու, խոսելու և գրելու հմտություններ), անգլերենի իմացությունը կոդիվի որպես առավելություն:

6. Տեխնիկական առաջարկի և գնառաջարկի ներկայացման պահանջներ

Հետաքրքրված թեկնածու փորձագետը պետք է ներկայացնի ինքնակենսագրական՝ ցուցադրելով համապատասխան որակավորումները և փորձը: Ինքնակենսագրականը պետք է կազմի առավելագույնը 3 էջ, դրանից ավելին ներկայացված տեղեկությունները հաշվի չեն առնվելու գնահատման համար:

Հետաքրքրված թեկնածու փորձագետը պետք է ներկայացնի նաև մինչև 3 հաշվետվություն՝ պահանջվող որակավորումներին և առաջադրանքի խնդիրներին առնչվող նախկինում կատարած փորձագիտական աշխատանքներից:

Հետաքրքրված թեկնածու փորձագետը պետք է ներկայացնի գնառաջարկ՝ ներառյալ փորձագիտական օրերի քանակը և օրական դրույքաչափը, ինչպես նաև ճանապարհորդական ծախսերը (ներառյալ տրանսպորտը, կացությունը և այլն)՝ ստորև աղյուսակում բերվող մասնագրերի համաձայն: Օրերի քանակը և բյուջեն կհամաձայնեցվեն պայմանագրում. Դրանք կնշվեն հետևյալ կերպ՝ «մինչև [օրերի քանակը/գումարի չափը]»: Պայմանագրային խորհրդատուին փորձագիտական օրերի և այլ ծախսերի բյուջեն ամբողջությամբ սպառելու պահանջ չի ներկայացվում:

Փորձագետի վարձատրություն	Փորձագետների քանակ	Փորձագիտական օրերի քանակ	Մեկնաբանություն
Փորձագիտական աշխատանքներ	1	մինչև 18	օր
Ճանապարհորդական ծախսեր	Փորձագետների քանակ	Օրերի քանակ	Մեկնաբանություն
Կացություն	1	մինչև 2	օր
Տրանսպորտ	1	մինչև 3	օր